


ՅԵՐՈՒՆԻՄԱՐԱԳԻՐ

ՅԱՐՈՒՐԻՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ որ եւ գրութիւն
այեւ ե ուղղել առ

ԽՐԱԳՐԱԳԻՐ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պազար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵՍՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եղիպսոսի համար տեղի. ողջ դ. 30
" " վեցամսեայ " 50
Օսար երկիրներ տարեկան ծախս 25
" " վեցամսեայ " 14
Թղթաւարի ծախսը խմբագրու-
թեան վրայ է:

Խմբագրութեան ուղղումն մա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուի:

“ՔԱՄԵԼԵՕՆ,”

Շողորթութեան, գովաբանութեան, չի բըն-
նադատութեան տենչը քիչ ազդեցում մէջ այն-
քան բուն է սրբան մեր ընկերային զանա-
զան խաւերուն մէջ. անհատ մը հանրային
գործի մը մասնակցելուն պէս, որքան ալ ան-
կարեւոր ըլլայ այդ գործը կամ իր մասնակ-
ցութեան բաժինը, առաջին մասածումը, փա-
փազը կը դառնայ յիշուիլ, հռչակուիլ. Այս
նպատակին հասնելու համար ինչ բարեհամ-
բոյր ձեւեր կ'առնէ, ինչ սիրաշահ խօսքեր կը
գտնայ, ինչ ազնիւ կերեւայ. կը վարանիս,
եթէ մինչեւ իսկ դիտողութիւն մը ունիս իր
մասին, երեսին ըսելու կամ հրապարակելու.
Իսկ փորձէ անգամ մը իր փափակ ջիղին
գալիլ, ակնարկութիւն մը ըրէ՝ իր լծերը
թիւններուն ու սխալ գործունէութեանը, ե-
թէ խմբագիր ես՝ թերթիդ մէջ, եթէ ժողո-
վական ես՝ ժողովքի մէջ, և ահա՛ մարդը
կը փոխուի: Ճերմակը սեւ կը դառնայ, բա-
րեկամը հակառակորդ, բարեկիրթը կոպիտ:
Փոխանակ ճակատաբաց պատասխանելու, մու-
թին մէջ կը բանաւտէ զքեզ. դուն հանրային
կեանքի մէջ, բարոյական քննադատութիւն
մը ուղղած էիր իրեն. ան՝ անհատական կեան-
քիդ դալիլ կուզէ ու նիւթական վնաս տալ
քեզի: Մէկ չեն, տասը չեն աս սիպարները.
հարկերներով կը համուրին ամեն տեղ ուր
հայերու բազմութիւն մը կայ հաստատուած:

Եգիպտոս բացառութիւն չի կազմեր դժ-
բաղդաբար. ընդհանրապէս, իր տաք կլի-
մային չնորհիւ աւելի զօրաւոր կերպով հա-
տուցած է այդ տիպարներէն, իր բոյսերուն
պէս: Երկու-երեսութիւնը, ի հարկին քննե-
լու և պէտք չեղած ատեն անտարբեր երեւ-
նալու կապկային դիւանագիտութիւնը, երէկ
ձեռքդ սեղմիլու և վաղը ետեւէդ հայհոյե-
լու ունակութիւնը եկած խառնուած են բար-
քերու մէջ. երկար ուսումնասիրութեան պէտք
չունիս, այս երեւոյթները նշմարելու համար,
կը բաւէ որ քիչ մը պտտիլիս հանրային գոր-
ծերու և հաստատութիւններու շուրջը, էն
մեծէն էն պզտիկը, ու նոյն իսկ դիմագծե-
րուդ շարժումովը անախորժ տպաւորութիւն
մը յայտնես. հակառակորդները կը ցցուին:
Եթէ դիտողութիւն իմանալու մասին այս
տկարութիւնը ունիք, ջիղերնիս աւելի կը
զրգուի երբ ինկարկութիւնը պէտք եղած

չափով չի կատարուի. ան ամենէն ցաւալին
է, եթէ ոչ ծիծաղելին: Ժողովք մը, գու-
մարում մը կամ հանգէս մը կայ, բան մը
պիտի խօսուի, բան մը պիտի երգուի կամ
նուագուի, հասոյթի կամ նպատակի միջոց մը
պիտի խորհուի, մարմին մը ուրիշ մարմին մը
պիտի տապալէ, կամ պաշտօնակից մը ու-
րիշ պաշտօնակցի մը նեցուկ պիտի ըլլայ
ինդրի մը մէջ. այդ միջոցին ինչ “պատուա-
կան” մարդ ես, եթէ գրիչով, խօսքով կամ
գործով կրնաս աշակցութիւն մը մատուցա-
նել առաջագործած նպատակին յաջողութեան:
Կը շրջապատուիս, կը փայրայուիս, կարեւո-
րութեանդ համեմատ:

Պատահեցաւ սակայն որ, օրին մէկը նոյն
խանդավառութեամբ չզգացիր այդ միեւնոյն մար-
դերուն ու գործերուն վրայ, փորձը, գիտակ-
ցութիւնը համոզելին քեզի որ սրտուածը չի
շարունակուիր կամ բաղձալարով չէ որ իրա-
կանացաւ, ու լուռ դիտող մը մնացիր, գրիչդ
մէկ կողմ ու կաղամարդ դոյ: Այս “սփիւղ”
անպատիժ չի մնար. թերթեագոյն պատիժը
համարուելով արհամարհանք ու անարգանք
նախկին քննողներէն, խուլ ատելութեան մը
հետ որ և ոչ իսկ պոռթկալու քաջութիւնը
կուենայ:

Ինչ մը աւելի անկեղծ ըլլանք մեր յա-
րաբերութիւններուն մէջ. բարեկամ կամ հա-
կառակորդ, բայց առանց ամեն վայրկենի
ակնկալութիւններու. վիճաբանութեան, քնն-
նադատութեան երկիւղը և գովութեան փա-
փազը միայն չառաջնորդեն մեզի ու մեր
զգացումներուն: Բարոյականի պակասութիւ-
նը քիչ մըն ալ այդ տեսակ վարմունքներուն
մէջ փնտռենք՝ փոխանակ անմեղ սիրաբանու-
թեան մը, չղաղկեալի մը նկարագրութեան,
կամ ֆանթեզի գրուածքներու մէջ գտնել
ուզելու անպատճառ:

ՔՐՕՆԻԿ

Բարեկենդան . . . Օ՛հ, հայիչ բուռը եր-
բեմի: Ուրախութեան, ուրախութեան, կեր ու խումբ
ղոց մը շարաքներ՝ որոնց մէջ մտնող կը փորձենք
տարուան մը ամբողջ զաւնութիւնները: Կեանքի
մեծ արձակուրդն էր այդ: Աւա՛ղ, այսօր, մարդկու-
թիւնը յողնած և ծերացած՝ աղկէ ալ հաճոյք չըզ-
գար, և բարեկենդանը յաշիկ յաշիկ անհետանա-
լու վրայ է աշխարհիս վրայէն ինչպէս անհետացած
են պարկեշտութիւնը, հաւատարմութիւնը, անխա-
ղախ գինին, դիմացկուն ձեռնոցները, ճշմարիտ սէ-

րը, վիպական դարոյցը, բարոյալից իմաստասիրե-
լը, սրբակրօն բաճանանքը, սոսմանագրութեան
տարեգարհը, բուն լոռնատեղծութիւնը, անշուրթ
կիները, անձնուէր բարեկամութիւնը և կոխիչ ու
պանիրը:

Եթէ այսօր բարեկենդանը չէ ինչ որ էր, պատ-
ճառը այն է որ այլեւս գոյութեան իրաւունքը
չունի:

Հին բարի ժամանակներուն մէջ կեղծիքը հազ-
ուագիւտ պտուղի մը համը ունէր, խառաքարտէ
զիմակ մը երեսնուս վրայ և այլեւս կրնայինք ստել,
երեւել մեր եղածին տարբեր բան մը, շողորթել
աս ու ան, կրնայինք ըրէ մը վրան-բաց բաներ ըսել
այդ գոյ դիմակին ստակ, և ներել ինքզինքնու ան-
պատշաճութիւններ որոնք մեր տուրեւայ կեանքին
մէջ մատնանիլ պիտի ըլլային:

Գահաճառերէն սկսեալ մինչև սպասուհիներու
հետ սիրաբանութիւններու մէջ, այսօր ամեն բան
սուտ է, կեղծիք, խաղախութիւն:

Քաղաքականութիւնը, օրուան անդիմակ մաս-
խաղանքներուն յանձնուած, միթէ բարեկենդան մը
չէ՞ ինչպէս:

Արքայական համազգեստները, զինուորներու
սուրբերը, երեսփոխանական ժողովներու կարգ ու
սարքը, զիւանազանական լոռնակցութիւնները, Հա-
փախի և Ռիւզէի հեռագիրները, տէրութեանց պիւս-
ճէն, բաժակահառերը, դեպքաններու ընդունելու-
թիւնները, կառավարական փոխադարձութիւնները, դեւ-
պանուհիներու սրտահանգէսները, այս ամենին ալ
բարեկենդանական CORSO մը accessoireներ են ամ-
բողջ CORSO մը որ տարին ի բուն կրնայինք և
որուն ծախքերը ժողովուրդը կը վճարէ այդ դիւա-
նագիտական բախշածները զրօսցնելու, կերակրելու
և պարարտացնելու համար:

Այստե՛հեւ չպիտի ըսենք,
— Ե՛ս, եկո՛ւր մասխաղա հազուինք.
Այլ հապա
— Տիրութեամբ ըլլա՛նք:

* * *

Տիրութեամբ սուրբի մը կատարեալ երեւոյթը
ունէր չորեքշաբթի գիշերուան նուագահանգէսը ուր
երգեց Օր. Մառի Մսերեանց կամ Մատուցել
Մարի Մարաշ, ինչպէս որ կուգէր:

Քօնքիմանքային հանգէսի յատուկ սրահը իր
մէջ կը պարտաւանդէր Կահիրէի եւրոպացի բարձր
գիտուն crême, Կոհարի, աղաւանդի, մետաքսի,
մերկ ուսերու, գիրք թեւերու, հարսնի և սղոտորիչ
կուրծքերու, խաբտեալ և ալւոր գլուխներու, յըզ-
կուն ուսերու, գեղեցիկ դէմքերու, ծանր անձնաւու-
րութիւններու, թիթեւ mondainներու, Ֆրաի,
Բլաի, ծաղկի կուտակում մը, որուն աշխարհիկ բոյ-
րը կը գինովցնէ՝ առանց խմելու և երազել կուտայ
աչքդ բաց:

Ամեն բան կար այդ սրահին մէջ, բայց . . .
հայերէն:

Հայ երգչուհին՝ գրեթէ յոյրովին օտարազգի
ուսնիքիներն ունեցաւ որոնք թերեւս գեղեցիկ չի մը-
նային եկած ըլլալուն համար, որովհետեւ ատիկայ
առիթ մըն էր դիւար գտնելու, Փլիթելու, խօսելու
և սրտի բանակցութիւններ կնքելու:

Օրիորդ Մսերեանց գեղեցիկ չըլտայեցութեամբ

համազուտ էն Տրէֆիւսի մեղադրութեանը Ընդհակառակը, Պ. Թառախէօ կը հաւատայ անոր անմեղութեանը : Կօնը զօրավարը չուզելով պատասխանել կարգ մը հարցումներու, բուն միջադէպ մը պատահեցաւ անոր և Զօլտի փաստարան Պ. Լապորի միջեւ :

Երբ զօրավարները դուրս ելան դատական պաշտօնատունէն, դուրսը համախմբուած բազմութիւնը «կեցցէ՛ հներ ալձակեց» :

Հինգշաբթի, 10 փետրւոյ. — Բէլլիէօ զօրավարը կը յայտարարէ թէ միակ մասնիկ մը կայ, ան ալ Տրէֆիւսն է :

Եղեռնադատ ատենին նախագահը կը մերժէ հարցաքննել նախկին նախարարները Պ. Թըվընէ լուսերով, սակայն, կը հաւատայ թէ էմիլ Զօլա համազուտով առաջ նետուած է այս պայքարին մէջ :

Ուրբաթ, 11 Փետրւոր. — Եղեռնադատ ատենին այսօրուան նիստին մէջ տեղակալ-գընդապետ Բիքառ կը բացատրէ թէ ինք միշտ հաւատացած է Էմիլ Զօլայ հրամանատարին յանցաւորութեանը, բայց թէ իր պետերը ականջ չէին կախեր իր գանդառնեւուն :

Այս յատարարութեան վրայ, նիստը ազմկայի կը դառնայ, որովհետեւ Բիքառի բարեկամները կը ծափահարեն, իսկ ունկընդիւններուն մնացեալ մասը կը բողբոջէ :

Դատավարութեան վերջը, միջադէպներ պատահեցան. ցուցարարներու խումբ մը, Պուրլար Սէպաստարայի վրայ գոռուած հրէի մը խանութին ապակիները խորտակեց :

ՅԱՆՍԱԿԱՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԹԻՒՆ

Թայվանի Բէլլիէի թղթակիցը կը հեռագրէ թէ Ֆրանսոս արհեստէր է Չինաստանէն՝ ութ օրուան պայմանով մը մէջ, զրաւական հատուցում ընել թողնելի մէջ Չինացի տաղաններու ձեռքով տուած հանգուած Ֆրանսացիի մը կրած վնասին փոխարէն. հակառակ պարագային, հարկ պիտի ըլլայ եղբւր որ Ֆրանսա գործօն դեր մը ստանձնէ երկնային կայսրութեան հարաւային մասին մէջ :

ԳՈՂՑՈՒԱԾ ՆԱՄԱԿ

Վաշինկթընի ուղարկուած լուր մը կը հասնի : Սպանիական դեպքին Պ. Տիւրիտի տը Լօմի մէկ մասնաւոր նամակը գողցուած ըլլալով Քուպայի հայրենասերի մը կողմէ, հրատարակուել է Նիւ Եօքի թերթերուն մէջ : Այդ նամակի որ կը նկարագրէ ամերիկեան հանրապետութեան նախագահ Պ. Մաք Քինլէն՝ իրրեւ ստորին աստիճանի բացարձակ մարդ մը որ ամբողջին միայն գոհացում տալու հետաւում է, մեծ իրարանցում առաջ բերաւ : Միացեալ Նաւահայաց կառավարութիւնը պահանջեց որ սպանիական դեպքանք ետ կանչուի :

Երկրորդ հեռագիր մը կը հաղորդէ թէ Պ. Տիւրիտի տը Լօմ հրաժարական զրկել է որ ընդունուել է սպանիական դահլիճին կողմէ :

ԺԱՆՏԱՆՏԵ ԿԱՒԵԼՆԱՅ

Պոստէն երկէ հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ վերջին շտաբում միջոցին ծանոթութեամբ թիւը կը հասնի 1113ի, այսինքն նախորդ շտաբում վրայ 100ին 20 յաւելում մը :

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Առաջնորդարանի Գլխաւորատունէն մեզ հաղորդուած ի հրատարակութիւն :

Ազգ. Գաւառ. Վարչութեան Քաղաքական Ժողովն՝ նախագահութեամբ Գեոր. Առաջնորդ. Տեղապահ հօր իր չարախակեան նիստն ըրաւ երէկ Առաջնորդարանի մէջ :

Ժողովին հաղորդուեցաւ ի մէջ այլոց ա-

տենագործութիւնն վախճանեալ Հաննա Եուսուֆ Ասիսի կտակին բացման որ կատարուած է Առաջնորդարանի մէջ, անցեալ չորեքշաբթի 9 փետրուար :

Նոյն կտակագործին մի քանի տրամագրութիւններով հանգուցեալը թողած է .

1. Ի Ֆէկկալա գտնուած գետնի մը և անոր վրայ կառուցեալ հինգ խանութներու և մէկ տան մէջ ունեցած կէս բաժինն Գահրէի Հայոց Ս. Աստուածածին եկեղեցւոյ :

2. Գարձեալ ի Ֆէկկալա գտնուած ուրիշ գետնի մը և անոր վրայ կառուցեալ հինգ խանութներուն մէջ ունեցած մէկ երրորդ բաժինն՝ Գահրէի հայ և Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակ աղքատաց :

3. Հինգ եղիպտական ոսկի Ս. Մինաս մատրան և գերեզմանատան :

Աղքատագրիպէն մեր ստացած լուրերուն համեմատ Աբրահամ Պէյ Բարթոլ հրաժարած է Աղքատախնամ ընկերութեան տանապետութենէն :

Այս հրաժարականը մեծ ցաւ պիտի պատճառէ անշուշտ ընդհանրապէս բոլոր Աղքատագրիպի հայերուն և մասնաւորապէս տեղւոյն աղքատներուն, որովհետեւ Բարթոլ պէյ իր առատաձեռնութեամբ և զիրքով միակ անձն է որ կրնար ամենէն արդիւնաւոր կերպով ստանձնել Աղքատախնամին տանապետութիւնը :

ԸՆԹԵՐՅԱՍԻՐԱՑԻՆ ԵՐԵԿՈՅԹԸ

Վերջին պահուն կը խնդրուի մեզմէ ծանուցանել թէ Ընթերցասիրաց ընկերութեան որակին մէջ այս զիշեր պիտի տեսնախօսէ Պ. Հրանտ Ալաթին, և թէ երաժշտութիւն պիտի ըլլայ արուեստակերպութեան խումբի մը կողմէ :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Բարձր. Խորվին հօրեղբայրը՝ լուէնս Օսման փաշա Թաղը երէկ առաւօտ Սաքարա գացած միջոցին յանկարծամահ եղաւ : Օսման փաշա խորվական գերդաստանի անդամներուն երիցագոյնն էր, ուսեալ ու ընկարական անձնաւորութիւն մը :

— Օրէնսդրական Խորհրդոյ ընդհանուր Ժողովի նոր նաաշխանին բացումը տեղի ունեցաւ այս հինգշաբթի օր, հանրօգուտ շինութեանց պաշտօնատան մեծ սրահին մէջ, Բարձր. Խորվին նախագահութեամբ որ բացման ճառին մէջ մասնաւորապէս խօսեցաւ հողային տուրքերու թեթեւացման որոշման վրայ որ, բնաւ, տէրութեանց հաւանութիւնը աւելուելուն պէս՝ գործադրութեան պիտի դրուի : Ե. Բարձրութիւն ծանոց միանգամայն թէ նոր փափոց մը (պառաժ) պիտի շինուի :

— Անգլիոյ թագուհին 100 սակիի գումար մը զրկած է Աղքատագրիպ անգլիական հիւպատոսարանին՝ Ռաս-էլ-Թինի պահականոցէն անգլիացի զինուորի մը կողմէ սպաննուած արաբ աղուն մօրը արուելու համար իրեն հատուցում :

— Սէրք-Արթիթիքի նկարչական ծրագրուցահանգէսը պիտի բացուի վաղը՝ Բարձր. Խորվը պիտի այցելէ ցուցահանգէսը ժամը 3ին :

— Եղիպտական երկաթուղիներու վար-

չութիւնը իր պաշտօններուն արդիւնքը համար որ վաշխառուներու չի դիմեն, որոշած է ամսու գլխէն առաջ թերհաշիւ կանխավճարներ ընել անոնց ստիպողական պէտքերին հոգարու համար և ամսու գլխուն վար դնել տրուած գումարը :

— Կերեւայ թէ, կըսէ Ռէժօրմ, Դուրը դիտողութիւն ուղղել է Խորվինի շոգենաւներու վաճառման մասին, առարկելով թէ քանի որ այդ շոգենաւային վարչութիւն Ֆէրմանով մը հաստատուած էր, անոր փոխանցումն ու վաճառումն ալ Ֆէրմանով մը միայն կրնար կատարուիլ : Եղիպտական կառավարութիւնը պատասխանել է թէ այս գործողութիւն Դրան իրաւասութեան սահմանին մէջ չէ և թէ պատերազմական նաւերու վերաբերեալ գործառնութեանց մէջ միայն Ֆէրմանի պէտք կայ, մինչդեռ Խորվինի շոգենաւները առեւտրական են :

— Երեկտրականութիւնն ալ, հրէականութեան պէս, իր հալածութիւնը կունենայ : Չորեքշաբթի օրը, երբ Աղքատագրիպ թաղապետական խորհուրդը նիստ կընէր քաղաքին երեկարական թրամուէյի գիծն երկարելու առաջարկը քննելու, չորս հարիւր կառապաններ, իրենց կառքերով, խմբուեցան այդ պաշտօնատան առջեւ և պատգամաւորութիւն մը խրկեցին խնդրելու համար որ երեկարական թրամուէյը վերցուի : Քանի մը ստիկան ցրուեցին «մարտիկ այդ ասպետները» :

— Նախընթաց օր մենամարտ մը տեղի ունեցաւ ի Ռամիէ (Աղքատագրիպ) երկու իտալացիներու միջեւ : Արճանակի երկու հարուած՝ փոխանակեցուցան, առանց մէկուն վնասելու, որմէ ետք մենամարտիկները հաշտուեցան :

ՎՐԻՊԱԿ. — Փարսի չորեքշաբթի օրուան թիւին մէջ՝ Աղքատագրիպ փոխանորդ վաճառական Մուրատեան էֆենտի անունը տուագրական սխալով փոխանակ Յակոբ ըլլալու Յարութիւն կրած էր :

ԼՕՄՊՐՕԶՈՒ

ՄԵԿ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Հոշակաւոր բնախօս, բոօֆէսէօր Չէղարէ Լօմպրօզօ ամերիկեան թերթի մը մէջ յօդուած մը գրած է որուն վրայ կարծէ անգլադաւանալ : Պ. Լօմպրօզօ ուսումնասիրութիւն մը կընէ գիտնալու համար թէ ի՞նչ պատճառաւ քաղաքակրթութեան մեծաքայլ յառաջդիմութեան հակառակ, մարդասպանութիւնները երթալով կաւեխան Միացեալ Նահանգաց մէջ. պատճառը այն է որ, կըսէ, քաղաքակրթութեան էն մեծ թշնամին — տեղի մը կլիման է :

Տաք երկիրներու մէջ մարդասպանութիւնները աւելի շատ են քան թէ պաղ երկիրներու մէջ :

Անգլիոյ մէջ սփիւնները ծանրաշափէն կախում ունին, ինչպէս նաեւ Ամերիկայի հարաւային երկիրներու մէջ սփառածները աւելի առատ են քան թէ այլուր :

Ըստ Լօմպրօզօյի, սփիւնները և աւաքիւնութիւնները իրենց յատուկ բարեխառնութեան գօտիները ունին ինչպէս կանանչեղէնները և որսի կենդանիները :

«Կարելի է — կը յաւելու մեծ բնախօսը — Ամերիկայի բնակիչները քաղաքակրթութեան շնորհիւ աւելի հարուստ և կամ աւելի

գեղեցիկ ընել, բայց երբեք կարելի չպիտի ըլլայ արգելել որ զիրար չսպանեն ուշիւրվէրի հարուածով: Թէքսասի մէջ դպրոցականները անգամ սպաննիչ գործիներ ունին իրենց գրականին մէջ:

Եւ միւրեքսերու համար եանքիները, կապահովցնէ թէ Իտալիոյ մէջ ալ ասանկ է, հաւաքային մասին մէջ աւելի մարդասպաններ կը ծնին քան հիւսիսայինին մէջ: Այս օրէնքով Լարսոնի ընակիչները առաքելութեան մէջ մէկ տիպարներ ըլլալու էին և իրաւ ալ ասանկ է:

* * *

Ջերմութեան և քաղաքակրթութեան էն մեծ պայքարը Ֆինի կղզիներուն մէջ կարելի է տեսնել:

Անգլիացիներէ կազմուած գիտական յանձնախումբ մը հաստատած է որ այդ կղզիին մէջ առաքելութիւնը և երջանկութիւնը նուազելու վրայ են՝ հակառակ քաղաքակրթութեան տարածման: Բողոքական միսիոնարները իրենց ամենէն ջերմ հաւատացեալները Ֆինի կղզիներու արշիպելագոսին մէջ գտած են. բայց յանձնախումբը գիտած է նաեւ որ աւետարանական այդ առաքելութիւններ գէշ արգելիչ մը յառաջ բերած են հոն: Օրինակի համար —կըսեն— այն օրէն որ բազմակնութիւնը արգելուեցաւ այդ կղզիներու մէջ, այլամերձ կիներու երամբ երթալով կատուարանայ:

Գրիստոնէութիւնը այդ երկիրներուն մէջ մուտ չի գտած՝ այլամերձ կիները կացինի հարուածով կը մեռնէին և այս վախին տակ, կիները ստիպուած էին հաւատարիմ մնալ իրենց ամուսիններուն. բայց հիմայ, որովհետեւ գիտեն թէ երկրային յանցանքները երկնից մէջ պիտի պատժուին, այդ օրին սպասելով ամենէն ապօրինի յարաբերութիւնները կը հաստատեն իրենց ամուսնական կեանքին մէջ:

Լոմարոզոյի այս տեսութիւնները չենք գիտեր որ աստիճանի իրաւացի են, բայց ամեն պարագայի մէջ տաք երկիրներու բնակիչները անպատճառ աւելի մոլութեանց բարեկամ ըլլալու են քան պաղ երկիրներու բնակիչները, որովհետեւ Աստուած անգամ իր երկնային տէրութեան մէջ տաք տեղը մեղաւորներուն տուած է և պաղը՝ անմեղներուն:

ՏԻԿԻՆ ՍՕՖԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Տիկին Ազգապետեան որ ծանօթ է իր արհեստին մէջ ունեցած հմտութեամբ եւ վարպետութեամբ, կը ծանուցանէ իր բազմաթիւ յանախորհներուն ինչպէս նաեւ յարգոյ հասարակութեան թէ իր բնակութիւնը փոխադրած է Եկեղեցիի մօտ Խուրուհիի փողոցի թիւ 53. (Ֆոնէրներու վարժարանին ֆոնի փողոց): 3—5

ԱԶԴ

Եկեղեցւոյ փողոց ԱՐԱՐԱՏ դեղարանիս մէջ ամեն օր կ'ըսէ օրէ ետքը կարելի է գտնել օտարաբան. ծանօթ բժիշկը՝ վկայեալ Բարիզի համալսարանէն, որ պիտի ընդունի իրեն զիմով հիւանդները:

Ուրբաթ օր կ'ըսէ օրէ վերջ ձրի դարմանում առնալու համար: 3—4

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱՒԱԳԵԱՆ

ԳԱՅԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՏԱԹԻԱՏԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդները պիտի գտնեն Եւրոպական բազայի գործարաններէն բերուած թարմ դեղեր, չափաւոր գիններով: Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրութեամբ կը պատրաստուին:

Անգլիական և ֆրանսական սքեսիալիթներ: Թարմ հաճախից ջուրեր, անուշահոտ քիւմիսներ. Բնականական և մանրադիտական բնութիւնը: Դեղարանս կը յաճախեն հայ և օտարազգի ծանօթ բժիշկներ:

Բժշկական ձրի խորհրդածութիւնը ազատաց համար: 26—50

ՖՈԹՕԿՐԱՖԻ ԷՓԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻՐԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱՐԱ ՄՈՒՀԱՄԵՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործութեան համեմատ հաստատուած այս լուսանկարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ կը հանուին գոհացուցիչ գիններով:

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆՆԵՐ: 9—10

Ա Լ Է Թ Ո Ւ Ա Ւ

Կ. Պոլսոյ մէջ հանրածանօթ ՊՈՍՏՈՐ Վաճառատունէն Տեաքը Յովակիմեան Եղորարք այստեղամ հաստատուած են ի Գաւիթէ և Մուսխի փողոցը՝ Լաթէսի գոհարավաճառատան զիմայ բացած են վաճառատուն մը որ կը ծախուին բրդեղէն և բամբակեղէն ձաւակա, գուլպայ և զանազան տեսակ ընտիր շապիկներ, օձիքներ, քեւնոցներ:

Ճոխ դանդաղանութիւն մաքրեցրի, հոսեղեցներ, բու և արդուզարդի վերարեբեալ ամեն տեսակ ապրանք: Շեֆիլթի հոշակաւոր պողպատեայ գործիներ, ամեղի, մկրաց, զմեղի և ըն:

ԱՊԱՐԱՆԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ և ԱՆՄՐՅԵԼԻ ԳԻՆԵՐ: Գաւառներէն եկած յանձնարարութիւնը ճշդիւ և փութով կը կատարուին: 23—24

ԼՈՒԱՑԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻԶ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՒԷԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆԻ ՆԱԽԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՑ ամեն տեսակ ճերմակեղէններու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց շապիկներ, շրջագոյստներ, և ըն. մաքրութիւն, ճշգրտագործութիւն, և խիստ չափաւոր գին: 20—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱՂԵՍԱՆԳԻՐՈՅ ԳԻԹ

Կ Ս Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4,5	օմնիպ. 1,2,3,4,5	կէս ուղ. 1,2,3,4,5	Երբորէս 1,2,3,4,5	Խառն 1,2,3,4,5	օմնիպ. 1,2,3,4,5	Երբորէս 1,2,3,4,5	օմնիպ. 1,2,3,4,5	Երբորէս 1,2,3,4,5
Գաւիթէ	մեկ. 4 45	—	7 30	8 15	9 30	3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	ժամ. 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	մեկ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	ժամ. 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	երեկ. 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՍԱՆԳԻՐՈՅԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԹ

Կ Ս Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4,5	օմնիպ. 1,2,3,4,5	կէս ուղ. 1,2,3,4,5	Երբորէս 1,2,3,4,5	Խառն 1,2,3,4,5	օմնիպ. 1,2,3,4,5	Երբորէս 1,2,3,4,5	օմնիպ. 1,2,3,4,5	Երբորէս 1,2,3,4,5
Աղեքսանդրիա	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	ժամ. —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	առա. 1 9
Թանթա	ժամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գաւիթէ	ժամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷԶ

ՊԵՆՀԱՅԻ ԺԱՄԱՑ

ՍԻԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գաւիթէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	ժամ. 12 28	7 48	Կայարան	—	3 30
	մեկ. 12 33	7 53	Իսմաիլիա	երեկ. 1 20	7 5
Ջակաղիկ	ժամ. 1 34	8 54	Ջակաղիկ	ժամ. 3 7	8 53
	մեկ. 1 44	9 4		մեկ. 3 17	9 3
Իսմաիլիա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	ժամ. 4 13	9 47
Սիւէզ Կայարան	ժամ. —	5 —		մեկ. 4 17	9 4
Տաք (բարափ)	ժամ. 6 55	—	Գաւիթէ	ժամ. 5 5	10 35